

ցին: Եթե Սմիթի համար, համակրանքի սկզբունքով մարդիկ ուրիշներու վարմունքը կը հաւանին ու կը գնահատեն, *անկողմնակալ դիտորդի* միջոցով, անոնք իրենց անձնական վարմունքը բարոյական արժեւորումի կ'ենթարկեն: Սմիթի այս տեսակետը, սակայն, ի զօրու կը դառնայ, երբ մարդ *յուզականութեան* (Empathy) կարողութիւնն ու կամքը ունենայ, այսինքն՝ ան կարենայ ուրիշներու դրութեան մէջ մտնել եւ ըմբռնել ու իւրացնել անոնց զանազան զգացումները:

Սմիթի համաձայն, ինչպէս համակրանքը (Sympathy) եւ համակրանքի կարիքը՝ մարդկային բնատուր երեւոյթներ են, նոյնպէս նաեւ՝ հաւանելի (հաւանուելու արժանի) ըլլալը մարդկային բնատուր երեւոյթ մըն է, որ, որպէս բարոյական վարմունքի շարժառիթ, անհատը կ'առաջնորդէ դէպի բարոյական հասարակութիւն:

3. Ոչ-համոզիչ հիմնաւորում

Բարոյագիտութեան տեսութիւններու համոզիչ հիմնաւորման յոյժ կարեւորութեան կողքին, աւելի ընդունելի դարձնելու համար զայն, տակաւին մենք կարելիութիւն ունինք այլ տեսութիւնները քննարկել, անոնց «ոչ-համոզիչ» հիմնաւորումը փաստարկել ու մերժել զանոնք:

Այլ խօսքով, եթե մենք մէկ կողմէ՝ (որոշ չափով) համոզիչ կը գտնենք օրինակ Կանտի պարտագիտական (սկզբունքային) բարոյագիտութեան հիմնաւորումը, պէտք է միւս կողմէ՝ փաստարկել, որ բարոյագիտութեան միւս տեսութիւններու հիմնաւորումը մեզի համար համոզիչ չի թուիր, ինչպէս է պարագան օրինակ՝ նպատակաբանական (հետեւանքային) բարոյագիտութեան կամ զգացումի բարոյագիտութեան:

Յաջորդ, «Բարոյագիտութեան Տեսութիւններ» Մաս – 5ի մէջ (Էջ 156), վերոյիշեալ տեսութիւնները աւելի մանրամասնութեամբ ու յաջորդաբար պիտի քննարկուին:

